Պարույր Սևակ

Ենթադրում եմ

Ես կարող եմ ենթադրել,
Թե այս ջուրը ոչ թե պղտոր, այլ վճիտ է:
Ես կարող եմ ենթադրել,
Թե հոյակապ ապարանք է այս խրճիթը:
Ես կարող եմ ենթադրել,
Թե այս ծուխը
Գոլորշացող քարածուխ է,
Եվ այս կարմիր ճոթը բարակ
Ոչ թե լաթ է, այլ բոց - կրակ...
Ես կարող եմ ենթադրել, թե ինձ մոտ ես,
Թեպետ և մեզ սար ու ձորեր են անջատում:
Ես կարող եմ ենթադրել,
Թե դու համեստ-ամաչկոտ ես,
Մինչդեռ իրոք՝
Ինձ պարզապես չե՞ս նկատում...
Ես կարող եմ ենթադրել,
Թե այս քունը արթնություն է,
Եվ այն ծանրը պարտությունը
Չտեսնըված հաղթություն է.
Թե այս տանձը... մեծ սափոր է,
Եվ հանդես է այս... թափորը.

Թե այս լեռը... մի շուռ տրված հսկա փոս է
Եվ մի փոքրիկ ինքնահոս է
Իմ այն մատը,
Որ կոչվում է, կարծես, ճկույթ...
Ես կարող եմ ենթադրել,
Բայց ի՜նչ օգուտ...

25.V.1957թ.
Մոսկվա